

ՎԱՅՐԵՆԻ ՄԸ

Փարիզեան պողոտայի մը վրայ հանդիպեցայ ծերունի սեւամորթի մը, որ քաղաքավարութեամբ ինծի մօտենալով, մաքուր ֆրանսերէնով մը հարցուց Էթուալ հետիոտն երթալու կարճ ճամբան: Ըսի, թէ ես ալ այն կողմը կ'երթամ ու կրնայ ընկերանալ, եթէ կը փափաքի:

Ու ինկանք ճամբայ: Անցորդները անյագ հետաքրքրութեամբ մեզ կը դիտէին, որովհետեւ սեւամորթը զգեցած էր իր երկրի տարագը. փաթաթուած էր սպիտակներու մէջ, կը յիշեցներ Պետեվիները, ու գլխին ունէր *պուրնուզին* վեղարը: Պատկառելի հով մը կար վրան, ու անկասկած սեւամորթ ցեղի մը պետն էր: Հարցուցի.

-Ո՞ր երկրէն եք:

Սեւ դէմքին վրայ լուսաւոր ժայիտ մը նկարուեցաւ եւ պատասխանեց.

-Անշուշտ, աշխարհագրութիւն գիտեք: Կը յուսամ, որ գիտեք:

-Եթէ յաւակնութիւն չհամարեք, կրնամ ըսել, որ քիչ մը գիտեմ: Նախընտրած ճիւղերես մին եղած է եւ աշխարհագրութեան դասատու ալ եղած եմ:

Սեւամորթը հաւանաբար կասկածեցաւ աշխարհագիտութեանս վրայ:

-Որովհետեւ Եւրոպայի մէջ քարտես կը գծեն, սակայն, աշխարհագրութեան ուսուցիչներն անգամ, յաճախ, տգետ են իրենց... մասնագիտութեան մէջ: Ես ծնած եմ Նիամ Նիամ, Տիւպանքի եւ Շարի Նահանգին մէջ, Մպոմու եւ Ուելլէ գետերուն մօտ, որոնք Տիւպանքի եւ Սանկօ գետերուն հետ կը թափին Գոնկօ գետին մէջ: Այրեցեալ գօտիին հինգերորդ աստիճանին վրայ եմք: Վայրենիներ եմք: Ես վայրենի մըն եմ: Պարծանքով կ'ըսեմ վայրենի ըլլալս, որովհետեւ երկու տարի է, որ Եւրոպա եմ ու լիովին ըմբռնած ձեր քաղաքակրթութիւնը:

-Շահեկան է լսել ձեր տպաւորութիւններն ու կարծիքները:

-Ձեր մօտ ամեն բան սուղ է: Միակ աժան բանը ամենէն թանկագինը եղող՝ մարդկային կեանքն է:

-Անկախ այդ իրողութենէն՝ կրնա՞ք ուրանալ մեր գիտութիւնը, մեր գեղարուեստը, մեր կրօնքը, որ բարձրագոյնն է: